ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«.....» ..... 2024թ. **N.....-Ա**

ՈՐՈՇՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետով և 3-րդ մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով լուծարել «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերությունը /գտնվելու վայրը՝ 0010, Հայաստանի Հանրապետություն, ք.Երևան, Փ.Բուզանդի 1/3, գրանցման համարը՝ 286. 120.03280/:
2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետում ստեղծել լուծարման հանձնաժողով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի քաղաքապետարանի ենթակայության «Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) միակ բաժնետերը հանդիսանում է Երևան համայնքը, որին 100%-ով պատկանում են Ընկերության բաժնետոմսերը:

«Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերությունը 2023 թվականի արդյունքներով կրել է 11187.0 հազ. դրամի չափով ֆինանսական վնաս, իսկ 2024 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով՝ 2082.0 հազ. դրամ: 2024 թվականի առաջին եռամսյակի ֆինանսական հաշվետվություններով՝ Ընկերությունն ունեցել է նախորդ տարիներից կուտակված 26358.0 հազ. դրամ չափով վնաս:

«Քաղաքաշինություն» փակ բաժնետիրական ընկերության կողմից մատուցված ծառայությունների դիմաց Երևան քաղաքի բյուջեից վերջինիս պահպանման նպատակով հատկացվում է սուբսիդիա:

Հաշվի առնելով Ընկերության ոչ բավարար ֆինանսական ցուցանիշները, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ընկերության կանոնադրական հիմնական նպատակների մասով ՀՀ տնտեսության իրական հատվածում առկա են համարժեք ծառայություններ մատուցող մասնավոր այլ կազմակերպություններ, որպես Ընկերության 100% բաժնետեր առաջարկվում է Երևան քաղաքի ավագանու քննարկմանը ներկայացնել վերջինիս լուծարման վերաբերյալ համապատասխան որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ